ԵՐԲ ԴԵԼԱՀԱԽՆԵՀԸ ԾՆԸՂ ԵՆԴԱԼՆԸՂՄ...



ՄԿԱԾԵ՛Մ ԱՅԴ ՄԱԽԻՆ!

Տեղեկություններ ծնողների իրավական և նյութական պատասխանատվության մասին

ԽԵՐԸ

Դուք գիտեք, երեխա լինելը հեշտ չէ: Այն ավելի դժվար է, երբ երեխան չի ճանաչում իր մորն ու հորը: Երեխան ինչպես մոր, այնպես էլ հոր սիրո և հոգեկան աջակցության կարիքն ունի: Տնային աշխատանքը կատարելիս, թե հեծանիվ վարել սովորելիս, թե առօրյայում, երեխան միշտ Ձեր աջակցության կարիքն ունի: Դուք պատրա՞ստ եք սիրող ծնող դառնալու և երեխայի կողքին լինելու, երբ նա Ձեր կարիքն ունի:

ԻՐԱՑԸՂՆՄՆԵՐԸ

Երեխաներն իրավունք ունեն իմանալու իրենց ընտանիքի մասին: Նրանք իրավունք ունեն ծանոթ լինելու իրենց ընտանիքի հիվանդության պատմությանը, ստանալու սոցիալական և առողջության ապահովագրություն, ինչպես նաև ժառանգություն՝ ինչպես մորից, այնպես էլ հորից:

ՓԸՂԸ

Երեխա ունենալ նշանակում է ցմահ նյութական պատասխանատվություն ստանձնել: Մեծացող երեխան պետք է վայելի իր հոր և մոր սերը և նյութական աջակցությունը:

Կալիֆոռնիայի
երեխաների
օ•նության
ծառայությունների
դեպարտամենտ

ԵՐԵԽԱՅԻՆ ՅԳՆԵԼԸ ԻԱՆՄ է ԺԱՐԱՆԻԸՂՄ

Իմ երեխայի հայրը և ես ամուսնացած չենք, բայց մենք սիրում ենք իրար: Ես պե՞տք է այժմ մտածեմ երեխայի օգնության մասին:

Այո, քանի որ երբեմն իրավիճակը փոխվում է: Ձեր երեխայի ապագան ապահովելու համար Դուք պետք է հաստատեք նրա հայրությունը: Հայրության հայտարարագիրը ստորագրելը երեխայի հոր ճանաչման արագ, անվճար և դյուրին եղանակ է: Ռիվանդանոցում, երբ երեխան ծնվում է, երկու ծնողն էլ կարող են ստորագրել հայտարարագիրը: Կամ նրանք կարող են անել այդ ավելի ուշ՝ իրենց շրջանի (կոմսության) Երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտում (DCSS) կամ շրջանի սոցիալական օգնության դեպարտամենտում: Որպեսզի երեխան հաստատ ստանա իրեն հասանելիք օգնությունը, հարկավոր է նաև դատարանի որոշում ձեռք բերել երեխայի ապրուստադրամի վերաբերյալ:

DCSS-ը կարող է տալ Ձեզ անհրաժեշտ տեղեկությունները:

Ի՞նչ պետք է ես իմանամ, երբ իմ երեխայի մայրն ինձանից երեխայի ապրուստադրամ է պահանջում:

Այն բանից հետո, երբ Ձեր շրջանի Երեխաների օգնության դեպարտամենտում (DCSS) երեխայի օգնության գործ բացվի, Դուք իրավական փաստաթուղթ կստանաք, որը կոչվում է «դատականչ-բողոքագիր»: Բարկավոր է պատասխանել այդ փաստաթղթին: Դուք կարող եք Ձեր գործի մասին խոսել Ձեր շրջանի DCSS-ի հետ: Դա կարելի է անել նրանց զանգահարելով կամ այցելելով: Ձեր ստացած փաստաթղթի վրա նշված կլինեն նրանց հեռախոսի համարը և հասցեն: Հիշեք, որ Դուք միշտ կարող եք Ձեզ հետ փաստաբան բերել:

Ես չեմ կարողանում ապրել երեխայի մոր հետ: Ի՞նչ կպատահի, եթե ես հրաժարվեմ վճարել երեխայի ապրուստադրամը:

Օրենքը խստորեն պատժում է այն անձանց, ովքեր հրաժարվում են երեխայի ապրուստադրամ վճարել: Ձեր վարորդական իրավունքի վկայականը կարող է մերժվել կամ կասեցվել: Չվճարելը կարող է ազդել նաև Ձեր վարկային պատմության վրա, որը նշանակում է, որ Դուք այլևս չեք կարող Ձեր ցանկացած իրերը գնել, օրինակ՝ ստերեո նվագարկիչ կամ ավտոմեքենա: Եթե օրերից մի օր Դուք որոշեք ուսուցիչ կամ կապալառու դառնալ, հնարավոր է, որ Ձեզ մասնագիտական արտոնագիր չտան՝ չվճարված երեխայի ապրուստադրամի պատճառով: Եթե Դուք վիճակախաղով գումար շահեք, այն Ձեզ մեծ ուրախություն չի պատճառի: Նահանգը կպահի գումարը՝ երեխայի ապրուստադրամը վճարելու համար: Եվ վերջապես, Ձեզ կարող են բանտարկել:

Ի՞նչ անել, եթե ես գիտեմ, թե ով է երեխայի հայրը, սակայն նա չի ընդունում դա:

Եթե նա հրաժարվում է երեխայի հայրությունից, Ձեր շրջանի Երեխաների օգնության դեպարտամենտը կարող է հաստատել հայրությունը գենետիկական տեստերի օգնությամբ: Այդ տեստերը համեմատում են հավանական հոր, մոր և երեխայի ԴՆԹ-ն: Տեստերի արդյունքները շատ ճշգրիտ է: Եթե Դուք ամուսնացած չեք երեխայի հոր հետ, ապա նրա անունը չի կարող նշվել երեխայի ծննդյան վկայականի վրա մինչև չհաստատվի նրա հայրությունը:

ԵՐԿԸՂ ՃՆԸՂՆ ԷԼ ԺԱԿԱԽԽԱՆԱԿԸՂ ԵՆ

Իմ երեխայի հայրը հեռացել է քաղաքից մեր երեխայի ծնվելուց հետո, և ես չգիտեմ, թե նա որտեղ է: Ինչպես պետք է նահանգը գտնի նրան:

Ցանկացած տեղեկություն, որը Դուք կարող եք հայտնել Ձեր շրջանի Երեխաների օգնության դեպարտամենտին, կարող է օգտակար լինել: Երեխայի ծնողին գտնելու համար օգտագործվում է նրա վարորդական իրավունքի վկայականի տվյալները, սոցիալական ապահովագրության համարը և աշխատանքի վերաբերյալ տվյալները: Չխնամող ծնողի մասին կարելի է տեղեկություններ ստանալ նաև գործազրկության և հարկային, ինչպես նաև ոստիկանական գործերից: Եթե ծնողը մեկ այլ նահանգ է փոխադրվել, ապա այդ նահանգի Երեխաների օգնության դեպարտամենտը կզբաղվի նրան հայտնաբերելու գործով:

Սովորաբար որքա՞ն ժամանակ է պահանջվում մյուս ծնողին երեխայի ապրուստադրամ վճարել պարտադրող որոշում կայացնելու համար:

Այն բանից հետո, երբ Ձեր շրջանի Երեխաների օգնության դեպարտամենտում (DCSS) երեխայի օգնության գործ բացվի, Դուք իրավական փաստաթուղթ կստանաք, որը կոչվում է «դատականչ-բողոքագիր»: Ռարկավոր է պատասխանել այդ փաստաթղթին: Դուք կարող եք Ձեր գործի մասին խոսել Ձեր շրջանի DCSS-ի հետ: Դա կարելի է անել նրանց զանգահարելով կամ այցելելով: Ձեր ստացած փաստաթղթի վրա նշված կլինեն նրանց հեռախոսի համարը և հասցեն: Ռիշեք, որ Դուք միշտ կարող եք Ձեզ հետ փաստաբան բերել:

Ես չեմ կարողանում ապրել երեխայի մոր հետ: Ի՞նչ կպատահի, եթե ես հրաժարվեմ վճարել երեխայի ապրուստադրամը:

Օրենքը խստորեն պատժում է այն անձանց, ովքեր հրաժարվում են երեխայի ապրուստադրամ վճարել: Ձեր վարորդական իրավունքի վկայականը կարող է մերժվել կամ կասեցվել: Չվճարելը կարող է ազդել նաև Ձեր վարկային պատմության վրա, որը նշանակում է, որ Դուք այլևս չեք կարող Ձեր ցանկացած իրերը գնել, օրինակ՝ ստերեո նվագարկիչ կամ ավտոմեքենա: Եթե օրերից մի օր Դուք որոշեք ուսուցիչ կամ կապալառու դառնալ, հնարավոր է, որ Ձեզ մասնագիտական արտոնագիր չտան՝ չվճարված երեխայի ապրուստադրամի պատճառով: Եթե Դուք վիճակախաղով գումար շահեք, այն Ձեզ մեծ ուրախություն չի պատճառի: Նահանգը կպահի գումարը՝ երեխայի ապրուստադրամը վճարելու համար: Եվ վերջապես, Ձեզ կարող են բանտարկել:

Ի՞նչ անել, եթե ես գիտեմ, թե ով է երեխայի հայրը, սակայն նա չի ընդունում դա:

Եթե նա հրաժարվում է երեխայի հայրությունից, Ձեր շրջանի Երեխաների օգնության դեպարտամենտը կարող է հաստատել հայրությունը գենետիկական տեստերի օգնությամբ: Այդ տեստերը համեմատում են հավանական հոր, մոր և երեխայի ԴՆԹ-ն: Տեստերի արդյունքները շատ ճշգրիտ է: Եթե Դուք ամուսնացած չեք երեխայի հոր հետ, ապա նրա անունը չի կարող նշվել երեխայի ծննդյան վկայականի վրա մինչև չհաստատվի նրա հայրությունը:

ՅԳՆԵՄ ՁԵՐ ԵՐԵԽԱՅԻՆ

Ես կվճարեմ երեխայի ապրուստադրամը, սակայն մայրն ինձ համարյա թույլ չի տալիս երեխայի հետ ժամանակ անցկացնել: Ի՞նչ պետք է անեմ:

Այն բանից հետո, երբ հաստատվում է երեխայի հայրությունը և խնամակալությունը, Դուք կարող եք իրավունք ունենալ տեսնելու Ձեր երեխային՝ Ձեր խնամակալության պայմանագրի պայմանների համաձայն: Եթե մայրը Ձեզ թույլ չի տալիս տեսնել երեխային, դիմեք Ձեր տեղական Ընտանեկան գործերի դատական ծառայություն, որը գտնվում է շրջանի Գերագույն դատարանում:

Ես լսել եմ, որ իմ երեխայի հայրը կարող է չվճարել երեխայի ապրուստադրամ, եթե նա զինծառայության մեջ է:

Դա ճիշտ չէ: Զինվորական ծառայության անցնելը չի նշանակում, որ նա ազատվում է երեխայի նկատմամբ իր պարտականություններից: Երեխայի օգնության քննիչը կապ կհաստատի զինվորական ղեկավարության հետ և այնպես կանի, որ երեխայի ապրուստադրամի վճարման վերաբերյալ դատարանի որոշումն ի կատար ածվի հարկ եղած կարգով:

Կարո՞ղ եմ ես երեխայի օգնության ծառայություններ ստանալ հղի ժամանակ՝ նախքան երեխայի ծնվելը:

Այո: Դուք կարող եք երեխայի հայրության հաստատման աշխատանքն սկսել դեղ հղի ժամանակ: Եթե այն մարդը, որը Ձեր կարծիքով երեխայի հայրն է, հրաժարվում է հայրությունից, ապա երեխայի ծնվելուց հետո կարող է գենետիկական տեստ կատարվել: Գենետիկական տեստը կարող է կազմակերպել Ձեր շրջանի Երեխաների օգնության դեպարտամենտը:

ՄԿԱԾԵՄ ԱՅԴ ՄԱՀԻՆ

Կալիֆոռնիայի երեխաների օգնության ծառայությունների դեպարտամենտ

Անվճար հեռախոսահամար՝
(866) 249-0773
TTY անվճար հ եռախոսահամար՝
(866) 223-9529
www.childsup.ca.gov

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք Ձեր շրջանի

Pub 158 (Armenian) (6/06)